Լոռու մարզպետ Արթուր Նալբանդյանի ելույթը «Հայաստանն ընդդեմ կոռուպցիայի» ծրագրի շրջանակներում գումարված համաժողովին

25.07.2013թ.

Հարգելի պարոն փոխնախարար, պարոնայք և տիկնայք

«Հայաստանն ընդդեմ կոռուպցիայի» ծրագրի շրջանակներում գումարված այսօրվա համաժողովի խորագիրն իսկ հուշում է քննարկվող հարցերի հրատապությունն ու ոլորտներում առկա խնդիրների վերհանման, իրականացվող բարեփոխումների անհրաժեշտությունը:

,,Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի,, հետ շուրջ երկու տարի առաջ մենք հուշագիր ենք ստորագրել՝ պարտավորվելով պայքարել այնպիսի արատավոր երևույթի դեմ՝ ինչպիսին կոռուպցիան է, և գոհունակությամբ եմ նշում, որ այս ընթացքում մեր համագործակցությունը դրական առաջխաղացում ունի: Կարծում եմ, որ մեր համագործակցությունը պետք է շարունակել է՛լ ավելի ուշադրություն սևեռելով կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանն ու չեզոքցմանն ուղղված ձեռնարկումներին:

Հասարակության տարբեր շերտերի շահերը օրինական դաշտում դիտարկելը, դրանցից բխող առկա խնդիրների պարզաբանումն ու այդ գործընթացին նպատակաուղղված քայլերը ոչ միայն կնվազեցնեն կոռուպցիոն ռիսկերը, այլև կամրապնդեն օրինական այն դաշտը, որը կոչված է քաղաքացիների իրավական փոխհարաբերությունների կարգավորմանը:

Ելնելով այն իրողությունից, որ Նոտարական, Քաղաքացիական կացության ակտերի գրանցման, Դատական ակտերի հարկադիր կատարման և մյուս ծառայությունների ու ոլորտների գործունեությունն անմիջականորեն առնչվում են քաղաքացիների և իրավաբանական անձանց ձեռնարկած գործերի և գործառույթների հետ, դրանք երբեմն ունենում են կողմերի հակընդեմ դիրքորոշումներ, այդ ոլորտների աշխատողներն ու ծառայողները պետք է ունենան ոչ միայն օրենքների և օրենսդրական ակտերի փայլուն իմացություններ, այլև քաղաքացիների հետ փոխաբերվելու ծայրահեղ նրբանկատություն, որոնք հիմք են ծառայում յուրաքանչյուր հարցի դեպքում սպառիչ պատասխան և օրինական լուծում տալու : Այս գործում, կարծում եմ, մեծ դերակատարում կարող է ունենալ նաև հասարակայնության լայն խավերին գործող օրենքներին իրազեկելը և թույլատրելի սահմաններում թափանցիկ աշխատառճը:Ահա թե ինչու ես կարևորում եմ նման հանդիպումները Լոռու մարզում, քանի որ լինելով արդյունաբերական մարզ, ունենք նաև բնապահպանական խնդիրներ, որոնցում չեն բացառվում կոռուպցիոն ռիսկերը:

Վստահ եմ, որ համաժողովը կունենան իր դրական ազդեցությունը առնչվող բոլոր ուղղություններում և, հատկապես, կոռուպցիոն ռիսկերի նվազեցման անչափ անհրաժեշտ գործում:

Ողջունում եմ համաժողովի բոլոր մասնակիցներիդ և մաղթում բեղմնավոր աշխատանք: